«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպե՞ս բարելավել ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերությունների ճիշտ կապը

Հետազոտող ուսուցիչ՝ Վարդիթեր Գևորգյան
(Շիրակի մարզի Շիրակավանի միջնակարգ դպրոց)

ՇԻՐԱԿԱՎԱՆ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------էջ 3
Ինչպե՞ս բարելավել ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերությունների ճիշտ կապը ----------էջ 4
Եզրակացություն----------էջ 15
Գրականության ցանկ----------էջ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու կյանքում գոյություն ունի երեք կարևոր միջավայր՝ տուն, դպրոց, աշխատավայր, ուր ակնհայտ է այնպիսի միահյուսված կապ, որը երբեք չպետք է կորցնել, քանի որ ընտանիքը երեխայի առաջին ուսուցիչն է, որտեղից էլ սկիզբ է առնում աշակերտի կրթության որակի բարելավումը:

Թեմայի կարևորությունը պայմանավորված է ժամանակակից տեխնոլոգիական և սոցիալ-մշակութային աննախադեպ փոփոխություններով առաջադրված համընդհանուր մարտահրավերներով, որի արդյունքում կարևոր է ճիշտ հաղորդակցումը, համագործակցումը և արդյունավետ իրականացումը՝ ժամանակի պահանջներին համապատասխան:

Այս հետազոտության նպատակն է՝

- վեր հանել, վերլուծել ուսուցիչ-աշակերտ-ծնող հաղորդակցման գործընթացի կազմակերպումը, բացահայտել խոչընդոտող հիմնախնդիրներն ու գործոնները,
- նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետությանը՝ կարգապահական խնդիրների վերհանման և շտկման շնորհիվ,
- փոխել աշակերտների վերաբերմունքը դեպի դասը, որպեսզի նրանք մոտիվացված և սիրով ներկայանան դասին:

Ինչպե՞ս բարելավել ուսուցիչ–աշակերտ–ծնող հարաբերությունների ճիշտ կապը

Ուսուցիչ–աշակերտ փոխհարաբերությունների հարցն ուսումնադաստիարակչական աշխատանքի հաջողության կարևորագույն բաղադրիչն է: Որոշ մանկավարժներ գտնում են, որ այդ փոխհարաբերությունների բարելավումը կախված է ուսուցչի բնավորությունից, շնորհից: Մի մասն էլ մտածում է, որ այն կախված է մանկավարժի պատասխանատվությունից, գիտելիքի իմացության մակարդակից: Ոմանք էլ մտածում են, որ այն կախված է ուսուցչի սիրուց՝ տվյալ աշակերտի հանդեպ, ինչն էլ բերում է փոխադարձ սիրո:

Սկսնակ ուսուցիչների մեծ մասին չի մտահոգում, թե իր և աշակերտների միջև ի՞նչ հարաբերություններ են ձևավորվում: Նրանք մտածում են միայն իրենց կայացման մասին(ոչ դիտավորյալ), ուստի տողի չեն ունենում նորմալ փոխհարաբերություններ և փնտրվում են <<մեղավորներ>>:

Ըստ իս, եթե չկան մանկավարժի բարոյաէթիկական նորմերը, մանկավարժական տակտը և վարպետությունը, չեն կարող լինել տևական փոխհարաբերություններ ուսուցչի և աշակերտների միջև: Այս հարաբերությունները չեն կարող դրսևորվել մեկ–երկու օրում, այն տևական գործընթաց է, որը դրսևորվում է ուսուցիչ–աշակերտ համատեղ գործունեության տարբեր ոլորտներում: Եվ դրանց բնույթը որոշվում է ուսուցչի հեղինակությամբ, պարտականությունների կատարմամբ, հոգեբանամանկավարժական պատրաստվածությամբ և մասնագիտական պատրաստվածությամբ:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա բարձր կուլտուրա, առարկայի խորն իմացություն, բարություն, ուշադրություն, մանկավարժական տակտ, հոգատարություն, լինի արդար՝ բոլոր աշակերտների նկատմամբ: Աշակերտն ավելի արագ է ճանաչում ուսուցչի վարմունքի դրսևորումները, քան նրա գիտելիքները: Ըստ աշակերտի՝ ուսուցիչն իր պարտավորությունները կատարող անձ է, ուստի նրանից շատ բան է կախված, որպեսզի կարողանա սովորողի մեջ համոզմունք առաջացնել, որ ինքը մտահոգված է յուրաքանչյուր աշակերտի ճակատագրով: Այս դեպքում ուսուցիչ–աշակերտ հարաբերություններում հաջողությունը կժպտա երկուսին էլ:

Ժամանակակից անվանի լեհ մանկավարժ Վ. Օկոնը նշել է, որ դպրոցը կոչված է աշակերտի մեջ պատվաստելու առնվազն երեք հատկանիշ.

1. ուսումնական ակտիվություն,
2. կոլեկտիվի հետ անհատի համագործակցելու ունակություն,
3. ինքնուրույնություն՝ մտածողության և գործունեության բնագավառներում:

Ինչպես կասեր մեծն Պլատոնը՝ եթե կոշկակարը վատ արհեստավոր լինի, պետությունը դրանից քիչ կտուժի, քաղաքացիները վատ հագնված կլինեն, բայց եթե ուսուցիչը վատ կատարի իր աշխատանքը, երկրում կհայտնվեն տգետների և վատ մարդկանց ամբողջ սերունդներ:

Պետք է լինել այն ուսուցիչը, որը նկատում է այն աշակերտներին, որոնք անկատ են լինում: Ուստի ուսուցիչ–աշակերտ փոխհարաբերությունների բարելավման մեջ մեծ դեր պետք է ունենա նաև ծնողը, որպեսզի այս եռակողմ համագործակցության արդյունքում ունենանք դրական ազդեցություն:

Ինչպես կասեր մեծն մանկավարժ Ա. Մակարենկոն՝ եթե կարողությունը քիչ է, ապա գերազանց ուսում պահանջելը ոչ միայն անօգուտ է, այլև՝ հանցավոր: Դուք չեք կարող ստիպել լավ սովորել, սա կարող է հանգեցնել ողբերգական հետևանքների:

<<Ուսուցիչ–աշակերտ փոխհարաբերությունների մասին>> ուսումնասիրության մեջ Մ. Հ. Մկրտչյանը համոզիչ հարցադրումներով և եզրահանգումներով ցույց է տալիս, որ <<ուսուցչի և աշակերտի փոխհարաբերություններում ծագող հակասություններն ըստ առաջացման պատճառների բաժանվում են երեք խմբի.

1. հակասություններ, որոնք բխում են ուսուցչի գործունեությունից,
2. աշակերտների տարիքային, հոգեբանական առանձնահատկություններից բխող հակասություններ,
3. սոցիալական հակասություններ>>:[1]

Բոլոր այդ հակասությունների վերացման համար մտահոգվողը միայն ուսուցիչը պետք է լինի, նախ այն պատճառով, որ դա նրա և պարտքը, և պարտականությունն է, մյուս կողմից՝ ըստ հին իմաստության՝ իրար չհասկացող և իրար հետ գժտվող բարեկամներից մեղավորը նա է, ով առավել գիտակից և փորձառու է:

Ուսուցչի և աշակերտի փոխհարաբերություններում ճշված երեք խումբ հակասությունները կանխելու համար առավել լայն հնարավորություններ ընձեռում են արտաամուսնական միջոցառումները, որոնք ուսուցչին հնարավորություն են ստեղծում ուսումնասիրել անհատի և կոլեկտիվի փոխհարաբերության իրավիճակը: Սակայն սովորողի անհատականությանը մոտիկից ծանոթանալու համար առավել արդյունավետ միջոցը նրա հետ մտերմիկ զրույց անցկացնելն է, մոտիկից շփվելը:

Ուսուցչի հիմնական <<զենքերն>> են իմացությունը, կենդանի խոսքը, որը պետք է սուր, հատու և դիպուկ լինի: Ուսուցիչը պետք է լավագույն ձևով օգտագործի այդ զենքը, քանի որ այն կարող է տարբեր հետևանքներ ունենալ՝ ուրախացնել և տխրեցնել, վիրավորել և հուզել, խրախուսել և ընկճել, ճզմել նրա ուսման նկատմամբ հոգևոր պահանջմունքների բավարարման ձգտումը:

Մանկավարժության դասականները, հատկապես Ա. Ս. Մակարենկոն և Վ. Ս. Սուխոմլինսկին, շատ բարձր են գնահատում ուսուցչի խոսքի դերը մանկավարժական գործունեության մեջ:

<<Ես համոզված եմ, որ երեխաներին լավ ասված ամուր, գործնական խոսքն ունի հսկայական նշանակություն... իսկ կարևոր է այնպես ասել, որ նրանք Ձեր խոսքի մեջ զգան Ձեր կամքը, Ձեր կուլտուրան, Ձեր անձնավորությունը: Դրանք պետք է սովորել>>:[1]

Իսկ Վ. Ս. Սուխոմլինսկին նկատել է <<Ես հավատում եմ դաստիարակի խոսքի զորեղ, անսահման ուժին: Խոսքն այն ամենանուրբ, ամենասուր գործիքն է, որով մենք՝ ուսուցիչներս պետք է հմտորեն մոտենանք մեր սաների սրտերին>>:[2]

Ուսուցչի հրամայական տոնը, իր ցուցումներն անհապաղ և անառարկելիորեն կատարելու պահանջն ոչ միշտ է տալիս ցանկալի արդյունք: Պետք է նկատի ունենալ, որ կան աշակերտներ, որոնց նկատմամբ պետք է կիրառել համոզելու մեթոդը և ոչ թե կարգադրություն, հրաման:

Մ. Հ. Մկրտչյան, «Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների մասին», Երևան 1979, էջ 114-115.

Դպրոցի առջև ծառացած հիմնախնդիրները պահանջում են փոխադարձ համագործակցություն, իսկ դրա նախապայմանը կշռադատված վարմունքն է: Ինչպես ժողովրդական իմաստությունն է ասում՝ <<կցանես արարք, կհնձես սովորույթ, կցանես սովորույթ, կհնձես բնավորություն, կցանես բնավորություն, կհնձես կամ դժբախտություն, կամ երջանկություն>>:

Աշակերտական կոլեկտիվի հետ մտերմական հարաբերություններ ստեղծելու փորձված միջոցներից է պարբերական մամուլում տպագրված բանավեճ հարուցող նյութերի կամ կյանքի առօրյայից վերցրած օրինակների շուրջ անցկացվող կարծիքների փոխանակությունը: Որպես կանոն, այդ օրինակ միջոցառումների ընթացքում վերանում են պաշտոնականությամբ հարուցվող կաշկանդվածությունը, ուսուցչի և աշակերտի միջև առկա պատնեշը: Հենց դա ինքնին դրականորեն է ներգործում ուսուցչի և կոլեկտիվի փոխըմբռնման վրա: Այսպիսով, մանկավարժական կոլեկտիվն աշակերտական կոլեկտիվի վրա ազդում է բազմաթիվ եղանակներով, ամենից առաջ գործնական հարաբերությունների ոլորտում:

Ուսումնական գործընթացի կազմակերպումը, դասավանդման մեթոդիկան, աշակերտների պատասխանները և այլն: Այդ բոլորը դրսևորվում են փոխազդեցության համապատասխան եղանակներում, փոխադարձ գնահատման ու ինքնագնահատման, ուսումնական գործունեության և կոլեկտիվ կերպով համագործակցելու մեջ: Հետևաբար, ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների հաղորդակցման գործընթացում առաջացող միջանձնային հարաբերությունները հաճախ կարող են լինել ընտրական բնույթի: Սակայն նշենք, որ ընտրական բնույթի միջանձնային հարաբերությունները չպետք է հավասար <<արտոնություններ>> ունենան ուսուցչի մոտ:

---

[1] Макаренко А. С. Собрание соч. М5, стр. 242

[2] Սուխոմլինսկի Վ. Ա. «Ինչպես դաստիարակել իսկական մարդ» Երևան, 1980 էջ 54.

Ուսուցիչներին բնութագրում են աշակերտական կոլեկտիվի տարբեր ոճի ղեկավարումը: Աշակերտները կարող են հարմարվել յուրաքանչյուր ուսուցչի առանձնահատկություններին, ակտիվորեն համագործակցելով այնպիսիների հետ, որոնց մոտ գերիշխում են դեմոկրատական ոճի միտումները:

Ինչպիսի հարաբերություններ կարող են ստեղծվել ուսուցման և դաստիարակության առավել բարենպաստ պայմաններում:

Ամենից առաջ դրական բարեկամության հարաբերություններ են, մեծ հարգանքի և սիրո, վստահության, հոգատարության, աշակերտի նկատմամբ ուշադիր լինելու, դպրոցական կյանքի երևույթների, առանձին աշակերտների արարքների նկատմամբ պահանջկոտության և սկզբունքայնության հարաբերություններ: Սակայն, չի կարելի մոռանալ, որ այդ հարաբերություններն երկուստեք են: Ինչպիսին է աշակերտի պատասխան ռեակցիան ուսուցչի հանդեպ՝ դրանից մեծապես կախված է ուսուցիչ-աշակերտ համակարգի գործողությունների բնույթը:

Ամփոփելով նշենք, որ ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների համակարգում նորմալ փոխհարաբերությունների հաստատումն իր հիմքում ունի.

1. հարգանքը և պահանջկոտությունը,
2. արդարացիությունը,
3. զգայուն և հոգատար վերաբերմունքը,
4. անհրաժեշտ օգնությունը դժվար պահին,
5. կոնֆլիկտների լուծման կուլտուրան,
6. վստահությունը աշակերտական կոլեկտիվի կարծիքի նկատմամբ,
7. աշակերտների արժանապատվության և ինքնասիրության խնայումը և թույլերին, ամաչկոներին պահպանումը ծաղրուծանակից,
8. ուշադիր և զգուշավոր մոտեցում աշակերտների արարքների գնահատմանը,

Աշակերտի վրա մեծ ազդեցություն ունեն ոչ միայն ուսուցչի մասնագիտական, այլ նաև անձնային որակները: Ուսուցչն աշակերտին ուսուցանում է իր օրինակով, հետևաբար նա աշակերտների հորիզոնում պետք է լինի հնարավորին չափ կատարյալ: Պետք է լինի կարգապահ, քանզի չի կարող սերմանել ճշտապահություն և պատասխանատվություն:

Ուսուցչի աշխատանքը չի ավարտվում զանգով. նա անընդհատ պետք է կատարելագործվի, զբաղվի ինքնակրթությամբ: Քանի որ, երբ ուսուցիչը դադարի սովորել, նա դադարում է ուսուցիչ լինել: Նա բացի իր դասավանդած առարկայի դրույթներից, պետք է սովորեցնի, թե աշակերտն իր ստացած գիտելիքներն ինչպես կարող է կիրառել:

Ուսուցիչը պետք է ունենա վերոհիշյալ անձնային և մասնագիտական որակները, ինչպես նաև նա պետք է լինի համբերատար, աշխատասեր, գթասիրտ, բարի և միևնույն ժամանակ պահանջկոտ և հարգված աշակերտների կողմից:

Հետևաբար աշակերտ-ուսուցիչ հաղորդակցումը պետք է հիմնված լինի փոխադարձ հարգանքի վրա:

Ուսուցիչների և աշակերտների համագործակցությունը ենթադրում է ուսուցիչների և աշակերտների համատեղ աշխատանք: Դպրոցում միշտ էլ եղել են առարկայի մասնագետ ուսուցիչներ և դաստիարակ ուսուցիչներ. առաջինները առարկայով են գնում երեխաների մոտ, իսկ մյուսները երեխաների հետ գնում դեպի առարկան:

Հենց սա է համագործակցությունը աշակերտների հետ, որը ծնվում է երեխաների հետ հաղորդակցվելու ընթացքում:

Այն երեխաներին, ովքեր հասակ են առնում համագործակցության մթնոլորտում, կարելի է ներկայացնել այսպես. նրանք բոլորն էլ կարող են և սիրում են մտածել, մտածողության արարումը նրանց համար արժեք է, բոլորն էլ օժտված են դիդակտիկական ունակություններով, յուրաքանչյուրն էլ կարող է նյութը բացատրել ուրիշին:

Ուսուցչի ջանքերով աշակերտները պետք է օբյեկտներից վերածվեն ուսումնական գործընթացի սուբյեկտների:

Օրինակ՝ ուսուցիչ-աշակերտ հաղորդակցման ձևերից մեկն էլ դասդեկի ժամն է.

Ես,որպես դասդեկ խոսեցի << հիգիենա>>-ի մասին: Աշակերտները ներկայացրեցին իրենց փոքրիկ ռեֆերատները, որոնք բազմաբնույթ էին : Դասդեկի ժամը ընդգծեց թեմայի կարևորությունն ու նշանակությունը կյանքում: Նմանատիպ դասերն ու զրույցները պետք է լինեն շարունակական: Դասը ուսանելի էր և շատ հետաքրքիր:

Ուսուցիչ-ծնող-աշակերտ հաղորդակցումը և համագործակցությունը

Դպրոցում կարևոր է նաև դպրոց-ընտանիք կապերի պահպանումը, որը ենթադրում է ուսուցիչ-ծնող-տնօրեն հաղորդակցումը և համագործակցումը:

Ծնողները պարբերաբար հաճախում են դպրոց, ստանում են տեղեկություններ իրենց երեխաների առաջադիմության և վարքի մասին:

Պարբերաբար դասդեկը կազմակերպում է ծնողական ժողովներ, որտեղ քննարկվում են երեխաների հետ առնչվող խնդիրները: Մեր կարծիքով, անթույլատրելի է ծնողական ժողովի ժամանակ բոլորի ներկայությամբ քննարկել որևէ աշակերտի վարքը կամ առաջադիմությունը: Նմանատիպ հարցերը

պետք է քննարկեն ուսուցիչը և ծնողը, հարկ եղած դեպքում նաև տնօրենը կամ փոխտնօրենները, առանց կողմնակի անձանց ներկայության:[3]

Ուսումնական գործընթացում ուսուցիչը սովորողների անհատականության զարգացման և նրանց հոգեկան, հոգեբանական ու ֆիզիկական առողջությունը պահպանելու նպատակով պետք է մշտապես համագործակցի աշակերտների ծնողների հետ:

Սովորողների ուսումնական աշխատանքների իրականացումը կազմակերպվում է դպրոցում և տանը: Ուստի դպրոցն ու ընտանիքը միահամուռ կերպով պետք է համախմբեն իրենց ջանքերը՝ սովորողների ուսումնական գործընթացի կազմակերպման գործում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տանը նույնպես պետք է շարունակվի այն ուսումնական պրոցեսը, որի հիմքը դրվել է դպրոցում: Սովորողը հստակ պետք է տարբերակի ուսումնական աշխատանքի կազմակերպումը դպրոցում և նույն աշխատանքի շարունակական բնույթը կատարի տանը: Այստեղ մեծ նշանակություն ունի ծնողների հետևողական վերաբերմունքն ուսումնական գործընթացի նկատմամբ: Ծնողները պետք է հետևեն սովորողին՝ ճիշտ կազմակերպելու և կատարելու ուսումնական առաջադրանքները: Քանի որ ոչ բոլոր ծնողներն են մանկավարժական գիտելիքներով զինված, ուստի դպրոցի խնդիրն է օգնել ծնողին՝ ճիշտ կազմակերպելու սովորողի դաստիարակությունն ու ուսումնական աշխատանքի իրականացումը տանը: Կրթահամալիրում սովորողների ծնողները իրազեկված են ուսուցման նկատմամբ դպրոցի պահանջներին: Ծնողների համար նույնպես ստեղծված են բոլոր անհրաժեշտ, ժամանակակից պայմանները՝ հետևելու և կազմակերպելու սովորողի ուսումնական գործընթացի իրականացումը տանը: Ստեղծված պայմանների շնորհիվ ծնողները կամա թե ակամա ընդգրկվում են սովորողի ուսումնական աշխատանքների կազմակերպման գործընթացին: Ծնողների համար կազմակերպվում են սեմինարներ, դասընթացներ, որի շնորհիվ ծնողներն ամբողջապես իրազեկվում են դպրոցի պահանջներին, անհրաժեշտ գիտելիքներ ստանում:

ՈՒսուցիչը պետք է հարգալից և բարեկամաբար վերաբերվի աշակերտների ծնողներին, նրանց ընդունի որպես գործընկեր և աջակից:

ՈՒսուցիչը աշակերտների ծնողներին պարբերաբար տեղեկատվություն է տրամադրում նրանց երեխաների ուսումնառության վերաբերյալ, ինչպես նաև խորհրդատվություն՝ նրանց կրթական կարիքների առնչությամբ:

ՈՒսուցիչը չի հրապարակում ինչպես երեխաների, այնպես էլ ծնողների՝ միմյանց մասին իրեն վստահած կարծիքն ու դիտարկումները:

---

3 https://www.aisa.sch.ae/uploaded/Files/ES/PYP_Information_for_Parents.pdf .https://www.ibo.org/globalassets/new-structure/brochures-and-infographics/pdfs/parent-pack-what-is-an-ib-education.pdf

Ծնողների հետ ուսուցչի հարաբերությունները ոչ մի կերպ չպետք է ներազդեն աշակերտների գնահատականի կամ կրթական այս կամ այն ծրագրերում նրանց ներառելու, ընդգրկելու հանգամանքի վրա:

ՈՒսուցիչ-աշակերտ հարաբերությունների և աշակերտների գնահատականի վրա ոչ մի կերպ չպետք է ներազդի աշակերտների ծնողների կողմից ուսումնական հաստատությանը ցուցաբերված աջակցությունը՝ անկախ դրա ձևից, չափից, կարևորությունից և բարդության աստիճանից:

Մանկավարժին ու ծնողին անհրաժեշտ է տիրապետել մանկավարժական վարպետությանը, լավ իմանալ մանկավարժական գիտական հետազոտության մեթոդները, երեխաների տարիքային շրջաբաժանումների բնութագրերը, նրանց բնավորության, խառնվածքի և այլ տարիքային անհատական հոգեբանական առանձնահատկությունները:Դպրոցում գործում են ծնողական խորհուրդներ, որոնք ստեղծվում են կապված աշակերտների թվի հետ: Լինում են.

- դասարանական ծնողական խորհուրդ,
- ըստ օղակների (կրտսեր, միջին, ավագ) ծնողական խորհուրդ,
- համադպրոցական ծնողական խորհուրդ:

Ծնողական խորհուրդի ներկայացուցիչներն ընդգրկվում են դպրոցական խորհրդի կազմում և մասնակցում դպրոցի կառավարմանը:

Ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերությունների բարելավմանը նպաստում է նաև դասղեկի կատարած ճիշտ աշխատանքը՝ ելնելով դասարանում տիրող իրավիճակից.

- հաճախակի ծնողական ժողովների կազմակերպում,
- դասարանական ժողովների կազմակերպում,
- անհատական զրույցներ ծնողների հետ:

Կարևոր է նաև ծանոթանալ սովորողների սոցիալական պայմաններին՝

- ընտանիքի կազմ,
- բնակարանային և կենցաղային պայմաններ,
- բարոյահոգեբանական պայմաններ:

Դասղեկի կարևոր գործառույթներից է՝ միավորել դասավանդող բոլոր ուսուցիչների ջանքերը՝ նպատակաուղղելով տվյալ խնդրի իրականացմանը: Ուստի այստեղ դաստիարակությունը կարելի է դիտարկել որպես մարդու սոցիալականացման գործընթացի մանկավարժական բաղադրիչ, որը ենթադրում է անձի ձևավորման համար պայմաններ ստեղծելու նպատակաուղղված գործունեություն: Դասղեկի մյուս կարևոր գործառույթը երեխայի սոցիալական պաշտպանության գործառույթն է, նրան շրջապատող սոցիալական միջավայրի անբարենպաստ ազդեցությունից պաշտպանելը: Սոցիալական պաշտպանությունն, առաջին

հերթին, հոգեբանամանկավարժական միջոցների ամբողջություն է, որը երաշխավորում է երեխայի օպտիմալ սոցիալական զարգացումը, նրա անհատականության ձևավորումը, հարմարեցումը գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական պայմաններին:

Այս գործառույթները իրականացնելիս, դասղեկը պետք է սուր իրավիճակներից մեկ քայլ առաջ անցնի, իրավիճակի ճշգրիտ վերլուծությամբ կանխատեսի խնդիրները ու դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխայի առջև և ուղղորդի, որ վերջինս կարողանա խուսափել դրանցից:

Ծնողների ներգրավվածությունը մեծ դեր ունի աշակերտների հաջողության մեջ: Ինչ սոցիալ-տնտեսական կարգավիճակ էլ լինի ընտանիքում, միևնույնն է, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացի զարգացման հարցում մեծ ազդեցություն է գործում: Փորձը ցույց է տվել, որ որքան ծնողն ակտիվ է մասնակցում կրթական գործընթացին, այնքան երեխայի ձեռքբերումները ավելի բարձր մակարդակի վրա են դրվում՝ երեխան ստանում է բարձր գիտելիքներ, հաճախման ցուցանիշները բարձր են լինում, աչքի է ընկնում դրական վարքով, բարեհամբույր է դպրոցի, ուսուցչի, ընկերների և շրջապատի նկատմամբ:

Ծնողի ակտիվությունը ուսումնական գործընթացում հարստացնում է դպրոցի կուլտուրան և հարստացնում դրա զարգացմանը:

Ծնողը պիտի ընկեր լինի իր երեխային, նրա հետ հաճախ զրուցի տարբեր թեմաներով՝ կյանքից, մարդկային հարաբերություններից, լավից, վատից, չարից, բարուց, արժեքներից, հայրենիքից և այլն: Մեր աշակերտները այն տարիքում են, որ նրանց միտքն ու հոգին մաքուր գրատախտակ են հիշեցնում: Մենք ինչ էլ գրենք, այդ էլ կմնա իրենց ուղեղում: Աշակերտին ճանաչելու, նրա հոգեբանությունն ու վարքը արագ ըմբռնելու, աշակերտի վրա ազդելու, ներգործելու հարցերում ծնողի դերն անփոխարինելի է: Ծնողն իր հերթին պետք է լսի և ընդունի այն նկատառում-դիտողությունը, որն անում է ուսուցիչը: Եվ որպեսզի ծնողն անտեղի չհակադրվի ուսուցչին, ինքնանպատակ քայլեր չանի, անհրաժեշտ է վստահություն ուսուցչի նկատմամբ: Այդ վստահությունը, բնականաբար, ուսուցիչը պետք է վաստակի:

Կրթված և գիտելիքներով զինված սերունդ դաստիարակելիս, ծնող-ուսուցիչ փոխհամագործակցության, համատեղ աշխատանքի գլխավոր նպատակը աշակերտի առաջադիմությունն է: Իսկ որտեղ՝ առաջադիմություն, այնտեղ՝ գնահատական:

Մենք՝ ուսուցիչներս, հաճախ ենք բախվում այդ հարցին՝ ծնողական եսասիրություն.իր երեխան լավագույնն է, նա արժանի է առավելագույն գնահատականի, իսկ ուսուցիչը կողմնապահություն է անում...

Ծնողներն ունեն ևս մի վատ սովորություն՝ երեխայի փոխարեն կատարել տնային աշխատանքները: Կարծում եմ՝ անիմաստ է խոսել ուսուցչի, կրթության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին, երբ ծնողը, որը չափահաս մարդ է, խոչընդոտում է իր երեխայի կրթության իրավունքի իրացմանը:

Ծնողը չպետք է երեխայի ներկայությամբ քննարկի դպրոցը, ուսուցչին, այս պարագայում նա միայն փչացնում է երեխայի հոգեբանությունը, խոչընդոտում է սեփական երեխայի ճիշտ աշխարհընկալմանը: Այս և այլ հարցերին լուծում տալու համար, ուսուցիչ–աշակերտ անընդհատ կապից բացի, պահանջվում է , իհարկե, ուսուցիչ–ծնող երկկողմանի մշտական փոխհամագործակցություն և փոխվստահություն:

Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար, դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցությամբ:

Ի դեպ, <<ծնող>> ասելով, նկատի չունենք միայն հայր կամ մայր, այլև այն անձինք, ովքեր անմիջական ներգրավվածություն ունեն երեխայի դաստիարակության գործում: Երբ ծնողն ի սկզբանե ներգրավվում է երեխայի ուսումնական գործընթացին, փոխվում են նրա սոցիալական, զգացմունքային կողմերը և անձնական հատկանիշները:

Ճիշտ ներգրավվածության արդյունքում ծնողը՝

- ավելի լավ է հասկանում երեխային,
- մեծ ուշադրություն է հատկացնում նրա սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացմանը,
- ավելի հոգատար է դառնում,
- ձեռք է բերում մեծ ինքնավստահություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով և վերլուծելով հաղորդակցումն ու համագործակցությունը ուսուցիչ – աշակերտ, ուսուցիչ – ծնող – աշակերտ միջանձնային փոխհարաբերություններում և կատարելով վերլուծություններ, եկանք հետևյալ ընդհանրական եզրակացությունների՝

- Հանրակրթական ոլորտը անընդհատ աճող և փոփոխվող համակարգ է, որը պահանջում է համադրել և մեծացնել իր առավելությունները ու ներուժը:
- Անձի ձևավորումը բարդ գործընթաց է, որին իրենց ուրույն մասնակցությունն ունեն դպրոցը և ընտանիքը:
- Անձի զարգացման ու ձևավորման համար հիմք են հանդիսանում կրթությունը, ուսուցումն ու դաստիարակությունը:
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կառավարման առանձնահատկություններից է ուսուցչի՝ որպես ուսումնական գործընթացի հիմնական կառավարչի, ուսումնական սկզբունքների ու մեթոդների իմացությունն ու կիրառումը:

- Դպրոցի և ընտանիքը կապն ու համագործակցությունը կարևոր տեղ և դեր ունեն աշակերտի կյանքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թադևոսյան Հ., Ատենախոսություն, Երևան, 2003թ.:
2. Իոհան Հերբարտի մանկավարժական հայացքները, (1776-1841թթ):
3. Макаренко А. С. Собрание соч. М5, стр. 242
4. Սուխոմլինսկի Վ. Ա.«Ինչպես դաստիարակել խսկական մարդ» Երևան, 1980 էջ 54.
5. Մ. Հ. Մկրտչյան, «Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների մասին», Երևան 1979, էջ 114-115.
6. https://www.aisa.sch.ae/uploaded/Files/ES/PYP_Information_for_Parents.pdf
7. https://www.ibo.org/globalassets/new-structure/brochures-and-infographics/pdfs/parent-pack-what-is-an-ib-education.pdf